

Նայաստանում պտղաբուծության զարգացման, սորտաշրջանացման և ագրոտեխնիկայի հարցերին: Ուսումնասիրել է ՆՍՍՀ խնձորենու ձևագոյացման կենտրոնները, հեռավոր հիբրիդացման եղանակով նոր սորտերի ստացումը, նկարագրել է խնձորենու տեսակային և սորտային կազմի կենսբ. առանձնահատկությունները, հայտնաբերել դրա տեղական 60 սորտ, որոնցից 4-ը (Ղափար, Չխչխկան, Մյունիքախնձոր, Կարմրկենի) ներդրել է ՆՍՍՀ հվ-արլ. և հս-արլ. շրջաններում: Մշակել է ՆՍՍՀ լեռնային և նախալեռնային շրջաններում պտղատու այգիների հիմնադրման և մշակության ագրոմիջոցառումներ:

*Երկ.* Նայաստանի վայրի պտուղները, Ե., 1959 (հեղինակակից Շահինյան Ն. Ն.): Տեղական ծագում ունեցող խնձորենու տեսակային և սորտային կազմը Նայկական ՍՍՌ-ում, Ե., 1960: Պտղաբուծություն, Ե., 1976 (հեղինակակից Շահինյան Ն. Ն.):

**ՄԱՐԳԱՐՅԱՆ** Արշալույս Նակոբի (ծն. 18.4.1914, Թիֆլիս), հայ սովետական բանաստեղծուհի: Ավարտել է Երևանի համալսարանի բանասիրական ֆակուլտետը (1936): Առաջին գիրքը՝ «Չնձաղիկներ» խորագրով, լույս է տեսել 1947-ին: Նրատարակել է «Գարնանային վտակներ» (1954), «Նայրենի հովիտ» (1958), «Նեոստաններ» (1962), «Երբ սիրում ես» (1970), «Դու ինձ սպասում էիր» (1975), «Ինձ հետ էիր դու» (1979) և այլ ժողովածուներ: Գրել է նաև մանուկների համար՝ «Թթենու տակ» (1954), «Մանկապարտեզ № 1» (1972):

**ՄԱՐԳԱՐՅԱՆ** Բենիամին Եղիշեի [ծն. 29.11(12.12). 1913, Շուլավեր (այժմ՝ Շահումյան, Վրաց. ՍՍՀ Մառնեուլի շրջան)], հայ սովետական աստղագետ, ՆՍՍՀ ԳԱ ակադեմիկոս (1971): ՆՍՍՀ գիտ. վաստ. գործիչ (1961): ՍՍՀՄ ԳԱ աստղագիտական խորհրդի անդամ (1964), Միջազգային աստղագիտական միության «Գալակտիկաներ» հանձնաժողովի պրեզիդենտ (1976—79): ՄՄԿԿ անդամ 1950-ից: Ավարտել է Երևանի համալսարանի ֆիզմաթ



Բ. Ե. Մարգարյան

ֆակուլտետը (1938): Աշխատում է Բյուրականի աստղադիտարանում. ավագ գիտաշխատող (1943—51), դիրեկտորի տեղակալ (1953—56), գալակտիկաների ուսումնասիրության բաժնի վարիչ (1957-ից): 1943—1950-ին աստղագիտություն է դասավանդել Երևանի համալսարանում: Գիտ. աշխատությունները վերաբերում են աստղային ու արտագալակտիկ աստղագիտության պրոբլեմներին: Մասնակցել է աստղերի բաշխման մեջ դիտվող *Ֆլուկտուացիաների տեսության* մշակմանը՝ հաշվի առնելով միջաստղա-

յին կլանումը: Դիտողական տվյալների հիման վրա հաստատել է, որ *աստղա-սփյուռները* լայնանում են: Մշակել է հատուկ մեթոդ, որի հիման վրա, 1965-ից Բյուրականի աստղադիտարանում սկսել է Երկնքի սպեկտրալ շրջահայությունը: Նայտնաբերել է հատուկ դասի օբյեկտներ, որոնք կոչվում են իր անունով (տես *Մարգարյանի գալակտիկաներ*):

Մ. ՍՍՀՄ պետ. մրցանակի դափնեկիր է (1950):

*Երկ.* Флюктуации в видимом распределении звезд и космическое поглощение, «Բյուրականի աստղադիտարանի հաղորդումներ», պրակ 1, 1946: Атлас звездных скоплений различных типов, М., 1953; Галактики с ультрафиолетовым континуумом, *Астрофизика*, 3, 55, 1967; On the Nature of Galaxies with UV Continuum Having Broad Emission Lines «*Astronomy and Astrophysics*», 58, 139, 1977.

*Ջ. Ստեփանյան*

**ՄԱՐԳԱՐՅԱՆ** Լևոն Պարթևի (ծն. 6.2. 1923, Երևան), հայ սովետական բժիշկ, մանկաբարձ-գինեկոլոգ: Բժշկ. գիտ. դ-ր (1976), պրոֆեսոր (1977): Պ. *Մարգարյանի* որդին է: Ավարտել է Երևանի բժշկ. ինստ-ը (1946): 1952-ից աշխատում է նույն ինստ-ի մանկաբարձության և գինեկոլոգիայի ամբիոնում: Գիտական աշխատանքները հիմնականում վերաբերում են հղիության ֆիզիոլոգիայի և խտաբանության, Նայաստանի արդ. ձեռնարկություններում աշխատող կանանց աշխատանքի հիգիենայի և պրոֆեսիոնալ ախտաբանության հարցերին:

Ուսումնասիրում է նաև ուղեղի բնի տարբեր բաժինների ազդեցությունը սեռական ֆունկցիաների և ռեարդուկտիվ գործունեության ձևավորման վրա:

**ՄԱՐԳԱՐՅԱՆ** Նենրիկ Ռուբենի (ծն. 17.9. 1925, Լենինական), հայ սովետական կինոռեժիսոր: ՆՍՍՀ արվեստի վաստ. գործիչ (1967): ՄՄԿԿ անդամ 1951-ից: Ավարտել է Երևանի գեղարվեստա-թատերական ինստ-ը (1951): 1955-ից աշխատում է «Նայֆիլմ» ստուդիայում: Ստեղծել է «Նվագախմբի տղաները» (1960, Ն. Մալյանի հետ), «Տերտերին ուխտը» (1966, «Մայր ժակը և ուրիշները» կինոալմանախում), «Կարծր ապար» (1975, Ա. Մկրտչյանի հետ), «Նեղկոմի նախագահը» (1978, ըստ Ս. Չորյանի), «Երկնագույն առյուծ» (1979) գեղարվեստական ֆիլմերը, ինչպես և փաստագրական ժապավեններ: 1972-ից Նայաստանի հեռուստատեսային ստուդիայում իրականացնում է հեռուստատեսային բեմադրություններ:

*Է. Մանուկյան*

**ՄԱՐԳԱՐՅԱՆ** Նովհաննես Սարգսի [13(26).1.1901, գ. Զաղաթիկ (այժմ՝ Նախիջևանի ԻՍՍՀ Օրդուբադի շրջանում) — 26.12.1963, Երևան], հայ սովետական ճարտարապետ, ՆՍՍՀ արվեստի վաստ. գործիչ (1961): ՍՍՀՄ շինարարության և ճարտ-յան ակադեմիայի իսկական անդամ (1956): ՄՄԿԿ անդամ 1944-ից: Նայաստանի ճարտ-ների միության վարչության նախագահ (1953—62): Ավարտել է Երևանի համալսարանի տեխ. ֆակուլտետի ճարտ-յան բաժինը (1928): Եղել է Նայաստանի պրոլետարական ճարտ. ընկերության հիմնադիր-անդամներից (1929—32), «Նայպետնախագիծ» կազմակերպության գլխավոր ճարտ. (1939—41),